ԼԱՅՆ ՄՏԱՀՈՐԻԶՈՆԻ ԵՎ ԲԵՂՄՆԱՎՈՐ ԳՐՉԻ ՏԵՐ ՆՈՐԱՐԱՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ

(Ն. Հովհաննիսյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանը բոլորեց իր կյանքի 75-ամյակը: Հիրավի, տաղանդավոր գիտնականի անցած ուղին, հայ արևելագիտական ու քաղաքական մտքին, հարազատ ժողովրդի պատմությանը, նրա հոգևոր արժեքներին ու մշակույթին բոլորանվեր ծառայելու փայլուն և ուսանելի օրինակ է:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանը պատկանում է հայ արևելագետների առաջին սերնդին: Նա Արևելագիտության ինստիտուտի հիմնադիրներից ու հիմնասյուներից մեկն է, որը հայ արևելագետների առաջին փաղանգի հետ իր ուսերի վրա է կրել նրա հիմնադրման, հայ արևելագիտության ձևավորման ու զարգացման ողջ ծանրությունը: Ն. Հովհաննիսյանը հայ արևելագիտությունը հարստացրել է մի շարք ուղղությունների ձևավորումով ու զարգացումով: Նրա անվան հետ է կապված հայ արաբագիտական գպրոցի հիմնադրումը և ձևավորումը Հայաստանում:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանը բեղմնավոր գրչի տեր գիտնական է: Նա հեղինակ է շուրջ 400 գիտական աշխատությունների, այդ թվում 30-ից ավելի մենագրական ուսումնասիրությունների, որոնք հրատարակվել են աշխարհի տարբեր երկրներում, տարբեր լեզուներով:

Զափազանց լայն և ընդգրկուն են Ն. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները: Արաբական Արևելքի երկրների ազգային-ազատագրական շարժումների վերաբերյալ նրա ուսումնասիրությունները, որոնք հրատարակված են յոթ հատորներում՝ «Անկախ Սիրիական Հանրապետության կազմավորումը» (Մոսկվա, 1968), «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում» (Երևան, 1967, Բեյրութ, 1974 արաբերեն), «Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում» (Երևան, 1976, ռուսերեն) և այլն, կարևոր ներդրում են արաբագիտության բնագավառում, լայն արձագանք են գտել և արժանացել բարձր գնահատականի

տարբեր երկրների ճանաչված մասնագետների կողմից: Նշված աշխատությունների շնորհիվ Ն. Հովհաննիսյանը իր հաստատուն տեղը գրավեց քաղաքական արևելագիտության բնագավառում: Նա միաժամանակ ճանաչվեց որպես պատմության և հասարակության վերափոխումների օրինաչափությունների հիանալի գիտակ: Ուշագրավ է, որ Ն. Հովհաննիսյանի նման բնույթի աշխատությունների անմիջական աղդեցությամբ Լիբանանում, Սիրիայում և Իրաքում հրատարակվեցին մի շարք ուսումնասիրություններ, որոնց հիմքում դրված են հայ գիտնականի հայեցակարդային դրույթները:

Ն. Հովհաննիսյանի գիտական հետազոտություններում իր արժանի տեղն է գրավում Արաբական Արևելքում, իսկ ավելի լայն առումով՝ Մերձավոր Արևելքում միջազգային հարաբերությունների ուսումնասիրությունը, որին էլ նվիրված են հեղինակի մենագրական մի քանի ուսումնասիրություններ և հոդվածներ: Այդ աշխատություններն անմիջապես իրենց վրա բևեռեցին տարբեր երկրների միջազգայնագետների ամենալայն շրջանների ուշադրությունը՝ դրանք համարելով նոր խոսք և կարևոր ներդրում Մերձավոր Արևելքում միջազդային հարաբերությունների ուսումնասիրության բնագավառում: Դրանց մեջ իր նորությամբ և կարևորությամբ առանձնանում է «Իմպերիալիստական պետությունների քաղաքականությունը Արաբական Արևելքում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին» մեծարժեք և իր բնույթով եզակի մենագրությունը, որը գերմանական հայտնի միջազգայնագետ Հորստ Գիրցը համարում է «բացառիկ ներդրում»:

Միշտ գտնվելով դիտական որոնումների առաջին գծում՝ Ն. Հովհաննիսյանն առաջիններից մեկը նկատեց և հիմնավորեց միջարաբական հարաբերությունների, որպես արաբագիտության նոր բնագավառի, ուսումնասիրության կարևորությունը և այդ խնդրի վերաբերյալ առաջ քաշեց նոր տեսադրույթներ ու մոտեցումներ:

Միջազգային հարաբերությունների պրոբլեմի ուսումնասիրությունը Ն. Հովհաննիսյանն իրականացրել է համաշխարհային ընդհանուր գործընթացների և Մերձավոր Արևելքի իրողությունների ընդհանուր հենքի վրա՝ չսահմանափակվելով միայն արաբական շրջանակներով, այլ դրանք սերտորեն աղերսելով միմյանց հետ: Այդ առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա «Իրանը մերձավորարևելյան տարածաշրջանի համակարգում (1979-1992)», ինչպես նաև տարածաշրջանում Թուրքիայի քաղաքականությանը, քրդական հարցին, ԱՄՆ-ի, նախկին ԽՍՀՄ-ի և արևմտյան տերությունների քաղաքականությանը նվիրված նրա աշխատությունների շարքը:

1986 թ. Համբուրդում կայացած Արևելագետների միջազգային XXXII կոնգրեսում պրոֆ. Ն. Հովհաննիսյանը մասնագետների դատին ներկայացրեց արաբական երկրների անհամաչափ զարդացման վերաբերյալ իր առաջ քաշած վերին աստիճանի ուշագրավ տեսադրույթը, որը, ըստ էության, նոր խոսք էր այդ բնագավառում: Արևմտյան գիտնականների կողմից դա գնահատվեց որպես կարևոր ներդրում:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Ն. Հովհաննիսյանի աշխատությունները նվիրված արաբական դաղափարախոսության ուսումնասիրությանը: Դա մի բարդ, իսկ եթե նկատի ունենանք արևելյան հասարակության յուրահատկությունը, ապա նաև վերին աստիճանի խճողված ընդգավառ է: Ն. Հովհաննիսյանը, սակայն, չի ընկրկել այդ դժվարությունների առջև և տարիների նրա պրպտումները տվել են փայլուն արդյունքներ: Այս թեմատիկայի հետ ուղղակի առնչություն ունեն նաև քաղաքական իսլամի հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված նրա աշխատությունների շարքը: Հաշվի առնելով հայ գիտնականի կարևոր գերակատարումն ու ներդրումն այս բնագավառում՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի կողմից նա նշանակվեց իսլամագիտական հետազոտական աշխատանքների համակարգող Հայաստանի Հանրապետությունում:

Հայաստանի և սփյուռքի դիտական հասարակայնության կողմից առանձնակի մեծ հետաքրքրությամբ ընդունվեց հայ-արաբական պատմաքաղաքական հարաբերություններին նվիրված Ն. Հովհաննիսյանի աշխատությունները, որոնց մեջ ուշագրավ են «Լիբանանյան կոնֆլիկտը և լիբանանահայ համայնքի գիրքորոշումը (1975–1982)» և Հալեպում արաբերեն լեզվով լույս տեսած «Հայ-արաբական բարեկամական կապերը» ուսումնասիրությունները: Դրանցում բացահայտված է այն կարևոր դերը, որ հայ համայնքները խաղում են հյուրընկալ արաբական երկրների պետական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:

Ն. Հովհաննիսյանին մեծ ճանաչում բերեցին արաբական ժամանակակից պատմագրության մեջ Հայկական հարցի և հայոց ցեղասպանության լուսաբանմանը նվիրված բազմաթիվ աշխատությունները, որոնք թարգմանվել ու հրատարակվել են նաև տյլ լեզուներով: Նա առաջինն էր, որ այդ հարցը դարձրեց հատուկ ուսումնասիրության առարկա: Գիտական առումով դա իսկապես նորություն էր, որն ընդլայնեց Հայկական հարցի և հայոց ցեղասպանության ուսումնասիրության շրջանակները և աղբյուրագիտական հիմքը: Ն. Հովհաննիսյանը հանրության ուշադրությանը ներկայացրեց տյն իրողությունը, որ արաբական պատմագրությունը հայոց ցեղասպանությունն ընկալում է որպես ոճրագործություն ոչ միայն հայերի, այլև համայն մարդկության դեմ: Այդ թեմաներով նրա գրած ուսումնասիրություններն եզակի են իրենց տեսակի մեջ, ուստի պաաահական չէ, որ գրանք ըստ արժանվույն գնահատվեցին ոչ միայն մեզանում, այլև արտասահմանում:

Տարիների ընթացքում կուտակած փորձը, խոր գիտելիքները և տեսական բարձր պատրաստվածությունը Ն. Հովհաննիսյանին հնարավորություն տվեցին ձեռնամուխ լինել ընդհանրացնող բնույթի աշխատությունների ստեղծմանը: Նա վերջերս ընթերցողի սեղանին դրեց «Արաբական երկրների պատմության» կոթողային երկու հատորները, որոնք լայն արձագանք գտան գիտական աշխարհում:

Ն. Հովհաննիսյանը ոչ միայն անվանի գիտնական է, այլև գիտության փայլուն կազմակերպիչ: Դեռևս 1984 թ., երբ նշանակվեց Արևելագիտության ինստիտուտի տնօրենի գիտական հարցերի գծով տեղակալ, և այդ

պաշտոնը զբաղեցրեց տասնմեկ տարի, նա իրեն դրսևորեց որպես նախաձեռնող, եռանդուն, կազմակերպչական մեծ ունակություններով օժտված և գիտական նորարարությանը նվիրյալ ղեկավար: Ն. Հովհաննիսյանի անդուլ ջանքերի շնորհիվ դրամաշնորհներ ձեռք բերվեցին արտասահմանյան մի շարք հիմնադրամներից, առաջին հերթին ամերիկյան «Արմեն և Բերսաբե Ջերեջյան հիմնադրամից», ինչպես նաև «Մակ-Արթուր», «Վինստոն», «Կարնեգի» հիմնադրամներից, Նիդեռլանդներից և այլն: Դա ինստիտուտին հնարավորություն տվեց ամեն տարի հրատարակել միջին հաշվով 15–20 մենագրություններ ու ժողովածուներ: Այդ դրամաշնորհների շնորհիվ հաջողվեց վերսկսել «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի հրատարակությունը, որն արդեն վերածվել է տարեգրքի ու բարձր գնահատականի արժանացել գիտնականների և ընթերցող լայն հասարակայնության կողմից: Այս տարի Ն. Հովհաննիսյանի խմբագրությամբ լույս տեսավ նրա XXIV հատորը:

Այն հանգամանքը, որ տարիներ ի վեր Արևելագիտության ինստիտուտը մեծ վերելք է ապրում և ունի գիտական բարձր համբավ ու հեղինակություն, մեծասլես պարտական է իր անխոնջ ու եռանդուն տնօրենի ջանքերին: Բնավ պատահական չէ, որ 2000 թ. Մոնրեալում ինստիտուտն ընտրվեց Արևելագիտական ու ասիական ուսումնասիրությունների միջազգային կազմակերպության անդամ, որը գործում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո: Ինստիտուտը նաև ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների Ստրատեգիական և միջազգային հարաբերությունների հետազոտական կենտրոնների միջազգային ասոցիացիայի անդամ է:

Հայաստանի անկախացումից հետո ստեղծված նոր իրադրությունը պահանջում էր նորովի մոտենալ ու վերաիմաստավորել հայ արևելագիտության խնդիրները և ուղղությունները: Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի ծառայություններից մեկն էլ այն է, որ նա կարողացավ հստակորեն սահմանել և հիմնավորել դրան վերաբերող նոր տեսադրույթները: Մյուս կարևոր քայլը, որը դարձյալ նորություն էր, հետևյալն է. հայտնի է, որ իր ձևավորման օրվանից հայ արևելագիտության ուսումնասիրության դաշտը սահմանափակված էր Մերձավոր ու Միջին Արևելքով: Հայաստանի անկախացումից հետո անհրաժեշտ դարձավ ընդլայնել հայ արևելագիտության ուսումնասիրությունների ոլորտը՝ նրա մեջ ներառելով նաև Արևելյան ու Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանը: Այդ էին պահանջում Հայաստանի պետական, աշխարհաքաղաքական և տնտեսական շահերը: Ն. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ, ՀՀ Արտաքին գործերի նախարարության և ՀՀ ԳԱԱ նախագահության աջակցությամբ, ՀՀ կառավարությունը 2003 թ. որոշում ընդունեց Արևելագիտության ինստիտուտի կազմում ստեղծել Արևելյան և Հարավարևելյան Ասիայի բաժին, որի հիմնական խնդիրներից է Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի պատմության ու քաղաքականության, Հայաստանի հետ դրանց միջպետական հարաբերությունների ուսումնասիրությունը: Դրա շնորհիվ հայ արևելագիտությունը դարձավ ավելի ամբողջական: Այժմ հայ արևելագիտության դաշտը, պրոֆ. Ն. Հովհաննիսյանի դիպուկ բնութագրմամբ, «ձգվում է Բոսֆորից Խաղաղ օվկիանոս»:

Ելնելով անկախ Հայաստանի առջև կանգնած խնդիրներից՝ պրոֆ. Ն. Հովհաննիսյանը սկսեց զբաղվել արտաքին քաղաքականության հանգուցային այնպիսի հարցերի ուսումնասիրությամբ, ինչպիսիք են Հայաստանի դիվանագիտությունը և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, Անդրկովկասյան-Մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը, Հայաստանը որպես միջազգային հարաբերությունների գործոն, նրա հարաբերությունները հարևան երկրների՝ Թուրքիայի, Իրանի, Ադրբեջանի, Վրաստանի, ինչպես նաև Ռուսաստանի, ԱՄՆ-ի ու Արևմտյան Եվրոպայի երկրների հետ: Այդ ուղղությամբ նրա ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են մենագրական մի շարք աշխատություններում, որոնցից պետք է առանձնացնել «Դիվանագիտություն. Ֆունկցիաները. Մարմինները. Ծառայողները», «Հայաստանի արտաքին քաղաքականությունը» (անգլերեն լեզվով), «Հայաստանի Հանրապետություն. Քաղաքականություն և դիվանագիտություն» (անգլերեն լեզվով, հրատարակվել է ԱՄՆ-ում), «Անդրկովկասյան-Մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը» (անգլերեն լեզվով, հրատարակվել է Հայաստանում ու Կանադայում) և այլն:

Ն. Հովհաննիսյանը որոշակի ներդրում ունի էթնոքաղաքական կոնֆլիկտների և, առաջին հերթին, Ղարաբաղյան կոնֆլիկտի ուսումնասիրության բնագավառում՝ առաջ քաշելով ինքնատիպ ու համարձակ առաջարկներ և լուծումներ: Այդ հիմնախնդիրներին նվիրված նրա աշխատություններից մի քանիսը հրատարակվել են արտասահմանում՝ Մերիլենդում (ԱՄՆ), Մոսկվայում, Վենետիկում և այլուր:

Վերջին շրջանում պրոֆ. Ն. Հովհաննիսյանը կրկին անդրադարձավ հայոց ցեղասպանության հարցերին և գիտական հասարակայնությանը իրար հետևից ներկայացրեց արժեքավոր մի շարք աշխատություններ, որոնք անմիջապես թարգմանվեցին օտար լեզուներով (ի դեպ, նաև թուրքերեն) և հրատարակվեցին Հայաստանում ու արտասահմանյան երկրներում: Այդ աշխատությունների սոսկ պարզ թվարկումն անդամ օգնում է գաղափար կազմելու ցեղասպանության և, մասնավորապես, հայոց ցեղասպանության հարցերի լուսաբանման բնագավառում պրոֆ. Ն. Հովհաննիսյանի կատարած հսկայական ներդրման մասին: Այդ աշխատություններն են. «Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում», «Հայոց ցեղասպանությունը. Հայասպանություն» (անգլերեն լեզվով), «Հայոց ցեղասպանություն» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով): Իր այդ աշխատություններով նա ոչ միայն նորովի մոտեցումներ է դրսևորում արևմտահայոց ցեղասպանության հետ կապված հարցերի նկատմամբ, այլև լայն շրջանառության մեջ է մտցնում «Հայասպանություն» եզրը:

Իզուր չէ, որ պարբերաբար նոր, թարմ մտքեր, տեսակետներ, գաղափարներ արտահայտելու և ոչ ստանդարտ մոտեցումներ ցուցաբերելու համար մասնագիտական շրջանակներում պրոֆ. Ն. Հովհաննիսյանին անվանում են «Նոր մտքերի գեներատոր»:

Հայ անվանի գիտնականը դասախոսություններ է կարդացել ու գիտական զեկուցումներով հանդես եկել արտասահմանյան բազմաթիվ երկրնե-

րի համալսարաններում և գիտական կենտրոններում, աշխարհի տարբեր քաղաքներում կայացած միջազգային կոնգրեսներում: Նա գիտահետազոտական աշխատանք է կատարել Դամասկոսի, Հալեպի, Լոնդոնի, Էդինբուրգի, Վաշինգտոնի Ջորջ Վաշինգտոնի համալսարանում, Մերիլենդի համալսարանում և այլն:

Նշանակալի է նաև պրոֆ. Ն. Հովհաննիսյանի ներդրումն արևելագիտական կադրերի պատրաստման բնագավառում, որը մշտապես գտնվում է նրա ուշադրության կենտրոնում: Նրա գիտական ղեկավարությամբ դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել մոտ երեսուն արևելագետներ, այդ թվում՝ Լիբանանից, Սիրիայից, Հորդանանից և այլ երկրներից: Նա ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի և «Ընդհանուր պատմություն» մասնագիտության գծով դոկտորական ատենախոսությունների պաշտպանության գիտական խորհրդի նախագահն է, ինչպես նաև մեր հանրապետության տարբեր գիտական կենտրոնների և ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների անդամ:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի գիտական վաստակը լայն ճանաչում է գտել և բարձր գնահատանքի արժանացել նաև արտասահմանում: Նա Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի, Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի (Մոսկվա), «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի (Փարիզ), Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի, Սիրիայի արաբական գիտության պատմության ընկերության (Հալեպ), Ազգային աշխարհագրական ընկերության (ԱՄՆ) անդամ է և Ամերիկյան կենսագրական ինստիտուտի հետազոտությունների վարչության խորհրդական: Նա նաև կոնֆլիկտների լուծման Հայաստանի Կենտրոնի հիմնադիր տնօրենն է և Հայ-ատլանտյան ասոցիացիայի նախագահը:

Ն. Հովհաննիսյանը նաև ականավոր հասարակական գործիչ է. եղել է Արաբական երկրների հետ բարեկամության խորհրդային ասոցիացիայի փոխնախագահ, Ասիայի և Աֆրիկայի երկրների հետ համերաշխության խորհրդային կոմիտեի, Արտասահմանյան երկրների հետ խորհրդային ընկերությունների միության խորհրդի անդամ, Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահ, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի Հայկական ընկերության նախագահության ու բյուրոյի անդամ և այլն:

Պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով, Ֆրիտյոֆ Նանսենի Հուշամեդալով, «Հայոց Մեծ Եղեռն» ոսկեզօծ արծաթյա մեդալով «Ցեղասպանագիտության մեջ ձեռք բերած վաստակի համար» և այլ պարգևներով:

Քեմբրիջի (Անգլիա) Միջազգային կենսագրական կենտրոնը նրան ընտրել է «2004-ի Տարվա միջազգային գիտնական», իսկ 2005 թ. նրան ճանաչել «XXI դարի ականավոր գիտնական»:

ԱՄՆ-ի Պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության Կենտրոնի տնօրեն, փոխծովակալ Եվգենի Քերոլի կարծիքով՝ «Ն. Հովհաննիսյանը մարդկային մի անհատականություն է՝ օժտված Միացյալ Նահանգների

հատկապես քաղաքական և սոցիալական խնդիրների ուժեղ հասկացողությամբ, և կարող է ներդնել փորձ ու իմաստություն մեր երկու ազգերին վերաբերող կարևոր խնդիրների ուսումնասիրության մեջ»: Իսկ Մերիլենդի համալսարանի պրոֆեսոր Բարի Սանդերսը նշում է, որ «Ն. Հովհաննիսյանը գիտական և քաղաքական վերլուծաբան է և նրա վերլուծությունները Անդրկովկասի քաղաքական ու տնտեսական հիմնախնդիրները գերազանց հասկանալու արտահայտություն է»:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանը ոչ միայն բեղմնավոր գրչի տեր գիտնական է, գիտության մեջ նորարար, հայ գիտության վրա հետք թողած գիտնական, այլև ազնիվ նվիրումի ու նկարագրի տեր մարդ, անհատականություն: Նա բազմազան հետաքրքրություններ ունեցող և ծրագրեր հետապնդող մարդ է, արտասովոր աշխատունակ, անմիջական, անաչառ, դյուրահաղորդ, հանրությանը ծառայելու պատրաստակամ, բարյացակամ: Նրան բնորոշ է համագործակցության ոգին, կարողանում է իր շուրջը համախմբել կարող ու գիտությանը նվիրված մարդկանց: Ազատախոհ է, ակտիվ խառնվածքի տեր մարդ: Նրան բնորոշ է խառնվածքի կայունությունը, ունի իր սկզբունքները պաշտպանելու անկոտրում հաստատակամություն: Վատի ու անարժանի դեմ պայքարի հարցերում նրա վճռականությունը հասնում է խելահեղ խիզախության:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի գործերի մեջ մշտապես տրոփում է ազգային ոգու զարկերակը: Նա ապրում է հայրենիքի հոգսերով, ժողովրդի ապագայի նկատմամբ ունի կայուն ու հաստատուն հավատ: Իր առջև դրված հարցերի լուծմանը մոտենում է լայն հայացքով ու ծավալուն ընդգրկումներով: Իր գիտակցական կյանքի տարիներն ապրել ու գործել է այնպես, ինչպես թելադրել է իր պարտքի գիտակցությունը:

Չնայած իր կյանքի յոթ և կես տասնյակ գարուններին, պրոֆ. Ն. Հովհաննիսյանը, տյգ լայն մտահորիզոնի, խոր գիտելիքների, բազմակողմանի զարգացած, հավատավոր, հայրենանվեր ու շնորհաշատ գիտնականը լի է ավյունով ու անսպառ եռանդով, գալիք աշխատանքային մեծ ծրագրերով: Ուրեմն, մաղթենք նրան քաջառողջություն, մշտանորոգ կորով և ազգանվեր նոր իրագործումներ:

ՎԱՀԱՆ ԲԱՑԲՈՒՐԴՅԱՆ